

Տ Ա Թ Ե Վ Գ Ի Տ Ա Կ Ր Թ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ի Ր

«Մանկավարժական միտք» հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի գիտական հանդեսների ցուցակում՝ համաձայն ՀՀ ԲՈՀ-ի խորհրդի 17.12.2001 թ. նիստի որոշման (արձ. № 25)՝ դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների համար

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԻՏՔ

ПЕДАГОГИЧЕСКАЯ МЫСЛЬ
PEDAGOGICAL THOUGHT

2018

1 – 2 (68–69)

ՀԱՆԴԵՍԻ ՀԻՄՆԱԴԻՐՆ Է
«ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ»

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԻՏՔ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈԿՐԱՏ	«Տաթև ԳԿՀ»-ի գլխավոր տնօրեն, համարի պատասխանատու խմբագիր
ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱՀՐԱՄ	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հայկական պետական ինստիտուտի ռեկտոր
ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ԶՈՒԼԻԵՏԱ	ՀՀ ԲՈՀ-ի նախագահ Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի պրոֆեսոր, մանկ. գիտ. դոկտոր
ՂՈՒԿԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ	ՀՀ կրթության ազգային ինստիտուտի տնօրեն Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի պրոֆեսոր, մանկ. գիտ. դոկտոր
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԼԵՄՍ	Մանկավարժական գիտությունների դոկտոր Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի պրոֆեսոր, մանկ. գիտ. դոկտոր
ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐԱՄ	Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ-ի թղթակից անդամ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱԶԱՐՅԱՆ ՌՈՐԵՐՏ	Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի հատուկ մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՏԻԳՐԱՆ	Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի օտար լեզուների ֆակուլտետի ղեկան, բան. գիտ. թեկնածու
ԱԼԻԽԱՆՅԱՆ ԱՇՈՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻԳՈՐ	Անանիա Շիրակացու անվան ճեմարանի տնօրեն Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՊԱՐԳԵՎ	Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ՄԱՐԴՈՅԱՆ ՌՈՒՉԱՆՆԱ	Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության ֆակուլտետի ղեկան, մանկ. գիտ. դոկտոր, դոցենտ
ՍԱՀԱԿՅԱՆ ԼԻԴԱ	Երևանի պետական բժշկական համալսարանի քիմիայի ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՐԵՐՏ ԱՅՎԱԶՅԱՆ ԷԴԱՐԴ	«Քվանտ» վարժարանի տնօրեն Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ դասախոս

THE FOUNDER OF THE JOURNAL “PEDAGOGICAL HOUGHT” IS
“TATEV SCIENTIFIC EDUCATIONAL COMPLEX

EDITORIAL BOARD OF THE JOURNAL “PEDAGOGICAL THOUGHT”

MKRTCHYAN SOKRAT	Founder and president of the “Tatev Scientific educational complex”, Responsible Editor of the Issue
ARAKELYAN VAHRAM	Rector of Yerevan State Institute of Physical Training and Sport
ARZUMANYAN LILIT	President of HQB, RA
GYULAMIRYAN JULIETA	Professor of State Armenian Pedagogical University
GHUKASYAN NORIK	Head of the National Institute of Education, RA
MANUKYAN MNATSAKAN	Professor of Armenian State Pedagogical University
MANUKYAN SERGEY	Doctor of Pedagogical Sciences
NERSISYAN LEMS	Doctor, Professor of State Armenian Pedagogical University
SIMONYAN ARAM	Rector of Yerevan State University, academician of National Academy of Sciences

EDITORIAL COUNCIL

AZARYAN ROBERT	Head of Special Education Department, Doctor, Professor of Pedagogical Sciences
MIKAYELYAN TIGRAN	Dean of the Faculty of Foreign Languages, ASPU, Ph.D.
ALIKHANYAN ASHOT	Director of College after A. Shirakatsi
KARAPETYAN IGOR	Professor of Foreign Language’s Teaching Methodology Chair, ASPU
GEVORGYAN PARGEV	Head of Education Department, Vanadzor State University, Doctor, Professor
MARDOYAN RUSANNA	Head of the pedagogical faculty of Gyumri State Pedagogical Institute after M. Nalbandyan
SAHAKYAN LIDA	Head of chemistry department, Yerevan State Medical University, Doctor, Professor
YARDANYAN ROBERT	Director of college “Quant”
AYVAZIAN EDWARD	Doctor of Pedagogy, Associated professor at YSU

УЧРЕДИТЕЛЬ ЖУРНАЛА
“НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС ТАТЕВ”

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

МКРТЧЯՆ ՏՕԿՐԱՏ	Учредитель и генеральный директор “Научно-образовательного комплекса Татев”, ответственный редактор номера
ԱՐԱԿԵԼՅԱՆ ՎԱԳՐԱՄ	Ректор Армянского государственного института физической культуры и спорта
ԱՐԶՄԱՆՅԱՆ ԼԻԼԻՏ	Председатель ВАК РА
ԳՍԿԱՏՅԱՆ ՆՕՐԻԿ	Директор Национального института образования РА
ԳՅՍԼԱՄԻՐՅԱՆ ԴՋՅՆԵՏՏԱ	Доктор, профессор Армянского государственного педагогического университета
ՄԱՆՍՅԱՆ ՄՆԱՇԱԿԱՆ	Профессор Армянского государственного педагогического университета
ՄԱՆՍՅԱՆ ՏԵՐԳԵՅԻ	Доктор педагогических наук
ՆԵՐՏԻՏՅԱՆ ԼԵՄՏ	Профессор Армянского государственного педагогического университета
ՏԻՄՕՆՅԱՆ ԱՐԱՄ	Ректор Ереванского государственного университета, член-кор. Академии наук РА

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

ԱԶԱՐՅԱՆ ՐՕԲԵՐՏ	Зав. кафедрой специальной педагогики, доктор педагогических наук, профессор
ԱԼԻՃԱՆՅԱՆ ԱՏՕՏ	Директор Армянского национального лицея им. Анания Ширакаци
ԿԱՐԱՓԵՏՅԱՆ ԻԳՐՅԷ	Профессор кафедры методики преподавания иностранных языков АГПУ
ՄԻԿԱԵԼՅԱՆ ԿԻԳՐԱՆ	Декан факультета иностранных языков АГПУ, к. ф. н.
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՐՕԲԵՐՏ	Директор гимназии “Квант”
ԳԵՎՕՐԳՅԱՆ ՓԱՐԳԵՎ	Заведующий кафедрой педагогики Ванадзорского государственного университета им. О. Туманяна, доктор, профессор
ՄԱՐԴՕՅԱՆ ՐԱԶԱՆՆԱ	Декан педагогического факультета Гюмрийского государственного педагогического института им. М. Налбандяна, д. п. н., доцент
ՏԱԱԿՅԱՆ ԼԻԴԱ	Заведующий кафедрой химии Ереванского государственного медицинского университета им. М. Гераци, д. п. н., профессор
ԱՅՎԱԶՅԱՆ ԷԴՎԱՐԴ	Доктор пед. наук, профессор, лектор ЕГУ

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՐԱԲԱՐԻ ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Անուն խոսքի մասերից ոչ միայն հայերենի, այլև շատ այլ լեզուների քերականությունների մեջ թվականը դեռևս իր կայուն տեղն ու ճշգրտված բառացանկը չունի¹: Ինչպես նշում է Հ. Աճառյանը, թեև իրենց պատմական առաջացմամբ թվերը կապված են կոնկրետ առարկաների, մեծ մասամբ մարդու ձեռքի և ոտքի մատների կոնկրետ քանակի հետ, բայց լեզվի ու մտածողության հետագա զարգացման ընթացքում նրանք հանդես են գալիս որպես քանակային բացարձակ մեծություններ՝ առանց նկատի առնելու կոնկրետ առարկաները²: Հայ քերականագիտության պատմության մեջ, սկսած Դիոնիսիոս Թրակացուց և նրա «Քերականական արվեստի» մեկնիչներից, քերականությունը ուսումնասիրվում էր խիստ նեղ, միայն գործնական նպատակով: Դիոնիսիոսը սահմանում է ութ խոսքի մաս կամ «մասն բանի»՝ անուն (այն չտարրորշված ձևով պարունակում էր գոյականը, ածականը, թվականը և մի քանի դերանուններ), բայ, ընդունելություն, հոդ, դերանուն, նախադրություն, մակբայ և շաղկապ: Ապա նա տարբերակում է անվան 23 տեսակ՝ ներառելով նաև թվականը: Թրակացու քերականության հայ մեկնիչները, հարազատ մնալով բնագրին, ընդունում են 8 խոսքի մաս: Անունը շարունակում են սահմանել գոյական անվան իմաստային և քերականական հատկանիշներով, թեև այն իր մեջ է առնում նաև ածականն ու թվականը³: Միջնադարի քերականագիտական համակարգում դասական և քանակական թվականները համարվում են առանձին անվանատեսակներ: Սրանք իրարից տարբերվում են մի էական առանձնահատկու-

թյամբ. դասականներն իրենց մեջ աստիճանավորում ունեն՝ հաջորդականությամբ պայմանավորված, մինչդեռ քանակական թվականները չունեն այդ կարգայնությունը: Թվականանվանմասինմանրամասնխոսել է Ա. Այտընյանը, որը, 8 խոսքի մասերը բաժանելով 2 խմբի՝ փոփոխական և անփոփոխ, փոփոխականի մեջ մտցնում է անունը՝ իր 2 տեսակներով՝ գոյական և ածական, և թվականը դիտելով որպես ածականի մի տեսակ՝ սահմանում է հետևյալ կերպ.

«Թուական անուն կ'ըստին այն բառերն, որ բառի մը որոշ համրանքը կը ցուցնեն»⁴: Նա առանձնացնում է թվականի 3 տեսակ՝ բացարձակ կամ գլխավոր, դասական և բաշխական:

Հայ քերականագիտության պատմության մեջ Ստ. Պալասայանն առաջինն է, որ թվականը առանձնացնում է ածականից՝ դիտելով այն որպես առանձին խոսքի մաս⁵: Այս հանգամանքը շատերի կողմից գնահատվում է որպես քերականագիտական նվաճում, թեև դա չի խանգարում Մ. Աբեղյանին՝ թվականները այլ խոսքի մասերի վրա բաշխելու կամ թվականի տեսակները թվական-ածական համարելու: Այս մտտեցումը Հ. Բարսեղյանը համարում է գիտական, քանի որ հայերենի թվականի բառակապակցական-քերականական հատկանիշների տեսակետից թվականները գրեթե չեն տարբերվում ածականներից: Իհարկե, պետք է հաշվի առնել, որ նրանք չունեն որակական ածականներին բնորոշ համեմատության աստիճաններ կազմելու ձևաբանական հատկանիշ և մակբայական ազատ գործածություն⁶:

1 Տե՛ս Հ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսումնառքը, Եր., 1980, էջ 497:

2 Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Եր., 1952, հ. 1, էջ 131:

3 Տե՛ս Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 9:

4 Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 30:

5 Տե՛ս Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 157:

6 Նույն տեղում, էջ 498:

Գրաբարի թվական անունները 3 տեսակ են՝ քանակական, դասական և անձներական:

Գրաբարում թվականի համար հատկապես կարևոր է նրա բառակազմական արժեքի մասին ամբողջական պատկերացումը, որն անհրաժեշտ է նրա հոլովման քերականական կարգի հետաքրքիր առանձնահատկությունների վերհանման և յուրացման տեսակետից: Գրաբարի որոշ դասագրքերում առանձին չի տրվում թվականի հոլովումը, այլ գոյական անունները ըստ հոլովումների բաշխելիս զուգահեռաբար նկատի են առնվում նաև թվական անունները¹: Գրաբարի քերականներ Ռ. Ղազարյանը և Հ. Ավետիսյանը², սակայն, այլ մոտեցում որդեգրեցին, և նրանց դասագրքում թվականի հոլովումը ներկայացված է գոյականից առանձին, որը, մեր կարծիքով, պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

1. Այսպիսի մոտեցմամբ գրաբարի և ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության ուսուցումը ընթանում է զուգահեռ:

2. Մասնագիտական տարբեր խմբերում դասավանդող դասախոսները պարտավորվում են առարկան ուսուցանել նույն ծրագրով և նույն դասագրքով, որի միջոցով ապահովվում է վերջնական որոշակի օբյեկտիվ արդյունք:

Թվականը՝ իբրև խոսքի մաս, գրաբարում դրսևորվում է իր հարուստ քերականական կարգերով՝ թիվ, հոլով, հոլովում: Գրաբարում առանձին թվականներ կամ թվականների խմբեր հոլովվում են տարբեր հոլովումներով: **Մի** թվականը անհոգնական է, հոլովվում է **n** հոլովիչով, **երկու, երեք, չորք** թվականներն անեզական են, որոնցից առաջինը հոլովվում է **ու** հոլովիչով, իսկ վերջին երկուսը՝ **ի** հոլովիչով: Սրանց հաջորդող բոլոր քանակական թվականներն ունեն և եզակի, և հոգնակի թիվ:

Հինգից մինչև **ինը** թվականները, բացի **եյթն** թվականից (հոլովվում է **ա** պարզ ներդրական հոլովմամբ), ինչպես նաև **մեքասան, երկուսասան, երեքսասան, չորեքսասան, հնգեքսասան, վեշքսասան,**

տասնյակներից **քսան, երեսուն, քառասուն, յիսուն, վաթսուն, եյթնասուն, ութսուն, ինսուն** թվականները հոլովվում են **ի** պարզ հոլովիչով: **Տասն, եյթնեպասն, ութեպասն, իննեպասն** թվականները հոլովվում են **ի-ա** խառն ներդրական հոլովմամբ: **Հարեք, երկերիք, երեքհարեք, չորեքհարեք, հինգհարեք, վեցհարեք, եյթնհարեք, ութհարեք, իննհարեք** թվականները հոլովվում են **n** պարզ հոլովմամբ: **Հազար** թվականը պատկանում է **ի-ա** արտաքին, իսկ **բեր** թվականը՝ **ու** պարզ հոլովման: Վերջինս հանդիպում է նաև այլ հոլովիչներով՝ **բիրաւ, բիրով**: Հարադրական կազմություն ունեցող բաղադրյալ քանակական թվականները հոլովվում են երկու կերպ. հոլովվում է միայն վերջին բաղադրիչը՝ **ա) քասն եւ երից, բ)** հոլովվում են բոլոր բաղադրիչները՝ **ի քսանից եւ ի հնգից**:

Դասական թվականները գրաբարում կազմվում են քանակականներից **-որոր** կամ **-երորդ** ածանցներով՝ բացի **առաջին** թվականից, որը հոլովվում է **n** հոլովիչով և ունի **առաջնորդ** և **առաջներորդ** զուգահեռ ձևերը: **Երկրորդ** թվականից սկսած՝ մյուս դասական թվականները հոլովվում են **ի-ա** խառն վերջադրական հոլովմամբ:

Անձներական թվականները, որոնք նշում են առարկաների միասնականությունը, կազմված են քանակականներից՝ **-եքին, -եքեան** ածանցներով, հոլովվում են **ու** հոլովիչով և միայն հոգնակի թվով:

Բացի թվականների վերոհիշյալ տեսակներից՝ կան նաև այլ թվականներ, որոնք կազմվում են բացարձակներից՝ կրկնությամբ, ածանցմամբ և այլն: Դրանք են բազմապատկական, հավաքական, կոտորակային, կրկնական թվականները, որոնց մանրամասնորեն անդրադարձել է Հ. Աճառյանը³: Հայերենի թվականի հոլովման մեջ կատարված հետագա փոփոխություններն ու տեղաշարժերը ամենից առաջ պայմանավորված են պարզեցման ու բազմազանությունների վերացման, հայերենի զարգացման ընդհանուր օրինաչափությունների մեջ լեզվական նոր որակի հետ կապված տարրերի զարգացման՝ հայերենին հատուկ ձգտմամբ:

1 Տե՛ս Շարաբխանյան Պ., Գրաբարի դասընթաց, Եր., 1974:

2 Տե՛ս Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Գրաբարի ձեռնարկ, Եր., 2007:

3 Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 272–330:

Ի տարբերություն ժամանակակից հայերենի, որտեղ թվականն իր հիմնական, որոշչային կիրառությամբ չունի թեքման ձևեր, գոյականի հետ գործածվում է ուղիղ ձևով, առավելապես նախադաս կիրառությամբ՝ անհամաձայն մնալով նրա հետ հոլովով և թվով, գրաբարում թվականները հիմնականում համաձայնում են գոյականներին: Թվականի հիմնական կիրառությունը գրաբարում որոշի պաշտոն կատարելն է, որը պայմանավորված է նրա խոսքամասային նշանակությամբ: Գրաբարում թվականները գոյականների հետ գործածվելիս համաձայնում են տարբեր ձևերով:

Գրաբարում **մի, երկու, երեք, չորք** քանակական թվականները գոյականի հետ գործածվում են թե՛ նախադաս, թե՛ հետադաս և համաձայնում են գոյականին: Հետաքրքիր է, որ գրաբարի **մի** քանակական թվականը հետադաս գործածությամբ առավելապես կատարում է անորոշ դերանվան դեր, օրինակ՝ *կին մի* – մի կին, որևէ կին, *այր ոք* – որևէ մարդ: **Հինգ** թվականից սկսած՝ քանակական թվականները նույնպես գոյականների հետ նախադաս և հետադաս գործածություն ունեն: Նախադաս գործածության դեպքում, սակայն, թվականը եզակի գոյականի հետ չի հոլովվում. գոյականը հոլովվում է, իսկ թվականը միայն իր վրա է կրում նախդիրները, օրինակ՝ **ի հինգ հացէ, զհինգ հաց**: Հոգնակի թվով գոյական անվան հետ դրվելով՝ նախադաս թվականը կարող է հոլովվել և չհոլովվել: Գոյականի հետ հետադաս գործածությամբ թվականը հոլովվում է՝ հոգնակի գոյականի մոտ արտահայտվելով հոգնակի թվով՝ բացի ուղղական և հայցական հոլովներից:

Դասական թվականները գոյականի հետ և՛ նախադաս, և՛ հետադաս գործածություն ունեն, ըստ որում գոյական անունը գործածվում է միայն եզակի թվով և հիմնականում համաձայնում է հետադաս դիրքում՝ **փան երրորդի, փամբ երրորդա** և այլն: Երբեմն դասական թվականները հանդիպում են հոլովված նաև նախադաս գործածությամբ՝ **յերկրորդում փան**: Անձներական թվականները գոյականների հետ սովորաբար գործածվում են նախադաս, հոլովվում են և համաձայնում հոլովով և թվով՝ **երկրին կողմանք, երկոցունց կողմանց** և այլն:

Իհարկե, մատենագրության մեջ հանդիպում են նաև հետադաս գործածության դեպքեր:

Գրաբարի թվականի ուսուցումը դասախոսից պահանջում է նաև ժամանակակից գրական արևելահայերենի ձևաբանության քաջատեղյակություն, քանի որ առանց անընդհատ համեմատություններ կատարելու ժամանակակից հայերենի լեզվական համապատասխան իրողությունների հետ՝ անհնար է առաջին կուրսի ուսանողին բացատրել գրաբարյան որևէ քերականական երևույթ: Թվականի հոլովումը, գործածության նրբությունները ուսանողին առավել հասանելի դարձնելու կարևորագույն ձևը, ինչ խոսք, համագործակցային մեթոդների օգնությամբ բնագրային բազմազան տեքստերի թարգմանությունն է և դրանց վրա կատարվող աշխատանքը, այդ բնագրերում գործածված թվականների առանձնացումն ու վերլուծությունը տարբեր վարժությունների միջոցով, այսինքն՝ քերականական ուսուցման այն ուղին, որը ենթադրում է լեզվական իրակությունների ընկալում, իմաստավորում, կանոնների ու սահմանումների հստակ ու հասկանալի ձևակերպում, դասի ամրապնդում, տնային աշխատանքի կատարում, ստուգում, ամփոփում: Որակյալ դասի գլխավոր հատկանիշը նրա համապատասխանությունն է ժամանակակից մանկավարժական գիտությունների նվաճումներին, առաջավոր փորձին, ուսումնադաստիարակչական գործընթացի օրինաչափություններին, դասի բնորոշ մեթոդներին ու միջոցներին: Որակյալ դասի կարևոր տարրերից են նաև նոր նյութի հաղորդման, ստուգման, գնահատման, ինչպես նաև ամրապնդման ու կրկնության ժամանակ անհատական ու խմբային աշխատանքների համակցումը, ուսուցման ավանդական ու ժամանակակից մեթոդների ճկուն ու արդյունավետ կիրառումը՝ յուրաքանչյուր ուսանողի առանձնահատկությունների, գիտելիքների և կարողությունների հաշվառմամբ:

susannagrigoryan@ysu.am

1 Տե՛ս Ջուհարյան Թ., Քայի ուսուցման հիմնական հարցերը, Եր., 1956, էջ 104:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976:
2. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, Եր., 1952, հ. 1:
3. Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987:
4. Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Գրաբարի ձեռնարկ, Եր., 2007:
5. Բարսեղյան Հ., Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Եր., 1980:
6. Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1981:
7. Շարաբխանյան Պ., Գրաբարի դասընթաց, Եր., 1974:
8. Ջուհարյան Թ., Բայի ուսուցման հիմնական հարցերը, Եր., 1956:

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПРЕПОДАВАНИЯ ЧИСЛИТЕЛЬНЫХ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

С. ГРИГОРЯН

В статье рассматривается проблема обучения числительных древнеармянского языка. Методика преподавания числительных одна из важнейших проблем обучения, поскольку числительные в системе частей речи различаются своими особенными смысловыми свойствами и грамматическими категориями. Числительные древнеармянского языка (грабара) имеют грамматические категории числа, падежа и склонения. Преподавание древнеармянских числительных имеет познавательное значение.

SOME PROBLEMS IN TEACHING OLD ARMENIAN NUMERALS

S. GRIGORYAN

The article examines the problem of teaching Old Armenian numerals. The method of teaching numerals is one of the most important issues of teaching, as far as numerals are unique in the system of parts of speech; they are distinct with their characteristic semantic features and grammatical categories. Numerals in Old Armenian (Grabar) have the grammatical categories of number, case and declensions. Teaching the Old Armenian numerals has a cognitive importance.